

ՀՀ Սպորտի եւ Երիտասարդության հարցերի նախարարի աշխատանքային այցը Արագածոտնի մարզ

Հունիսի 14-ին ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Գաբրիել Ղազարյանի աշխատանքային օրն անցավ Արագածոտնի մարզում:

Այցն սկսվեց մարզպետ Գաբրիել Գյոզալյանի հետ հանդիպմամբ: Քննարկվեցին մարզական ոլորտի զարգացման, հանրակրթական դպրոցների մարզադահլիճների վերանորոգման եւ կահավորման, մարզադպրոցների գործունեության հետ կապված հարցեր:

Առկա հիմնախնդիրներին ծանոթանալու նպատակով նախարարը եւ մարզպետը այցելեցին մի շարք համայնքներ: Առաջին կանգառը Ափնա համայնքի դպրոցում էր, որի մարզադահլիճը, թեպետ, տեղի ուժերով մասնակի վերանորոգվել է, այդուհանդերձ, հիմնանորոգման եւ գույքով ապահովելու կարիք ունի:

Այցելություններ կատարվեցին նաեւ Շենավանի, Վարդենուտի եւ Արտաշավանի դպրոցներ: Շենավանի դպրոցի մարզադահլիճը, թեպետ, վերանորոգման եւ գույքի խիստ կարիք ունի, այդուհանդերձ, այն հայտնի է իր ֆիզիկական պատրաստության լավ ավանդույթներով: Դպրոցը ֆուտբոլի լավ թիմ ունի, որը մասնակցում է բազմաթիվ մրցումների եւ հաղթանակներ է ունենում: Վարդենիսում ինչպես դպրոցը, այնպես էլ մարզադահլիճը նորերս են վերանորոգվել: Այստեղ, սակայն, մարզագույքի անհրաժեշտություն կա: Արտաշավանում եւս մարզադահլիճը հիմնանորոգման ենթակա է:

Աշտարակ քաղաքում նախարարն ու մարզպետն այցելեցին Աշտարակի թիվ 1 հիմնական դպրոց, որն իր հնարավորություններով, թերեւս, լավագույններից մեկն է հանրապետությունում: Եղան նաեւ ներկայումս կառուցվող մարզադպրոցում, ծանոթացան ընթացող շինարարական աշխատանքներին: Նորակառույցը ունենալու է ժամանակակից լավագույն հնարավորությունները եւ ծառայելու է ոչ միայն Աշտարակ քաղաքի, այլեւ տարածաշրջանի համայնքների մարզասերներին:

Աշխատանքային այցի ավարտին նախարարը, մարզպետը եւ նրանց միացած՝ ԱԺ պատգամավոր Բազմասեր Առաքելյանը խորհրդակցություն անցկացրին հանրակրթական դպրոցների ֆիզկուլտուրայի ուսուցիչների հետ: Քննարկվեցին ֆիզկուլտուրա առարկայի դասավանդման հետ կապված մի շարք խնդիրներ, հնչեցին համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր եւ ստացան սպառիչ պատասխաններ ու պարզաբանումներ: